«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման Էպոսի դերը հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման գործում

Առարկան Լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ Նորեյան Հերմինե

Ուսումնական հաստատություն Վ. Բազմաբերդի հիմնական դպրոց

ԹԱԼԻՆ 2022

Բովանդակություն

Ներածություն---------- 3

Էպոսի դերը հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման գործում

---------- 4

Եզրակացություն---------- 14

Օգտագործված գրականության ցանկ---------- 15

Ներածություն

Թեմայի կարևորությունը: Էպոսի միջոցով հայրենասիրության և ազգային արժեքների ձևավորման և դաստիարակության հարցը միշտ եղել է արդիական: Էպոսի միջոցով աշակերտները կարող են դաստիարակվել, որպես հայրենասեր անձինք: Հայրենասիրությունը բարոյական բարձր որակ է: Այն սոցիալական դիրքորոշում է, որի հիմնական բաղադրիչը սերն է: Մարդու հայրենասիրությունը հանդես է գալիս և մարմնավորվում տվյալ մարդու (դպրոցականի)՝ դեպի իր հայրենիքն ունեցած սիրո մեջ: Սերը ոչ միայն հայրենիքի նկատմամբ է, այլ նաև հայրենիքում ապրող ժողովրդի նկատմամբ: Երբ ասում ենք հայրենիք, ապա առաջին հերթին հասկանում ենք հայրենիքում ապրող ժողովուրդը: Եթե հայրենիքում ժողովուրդ չկա, ուրեմն հայրենիք չկա:

Առանց հայրենիքի, առանց հարազատ ժողովրդի մարդը լքյալ է, ինչպես Ռոբինզոնը: Նշանակում է՝ հայրենիքից թանկ, ժողովրդից թանկ ոչինչ չկա: Ցիցերոնն ասում էր. «Մեզ համար թանկ են երեխաները, մերձավոր ազգականները, բայց որևէ բանի նկատմամբ սիրո բոլոր պատկերացումները միավորված են մեկ բառի մեջ՝ «Հայրենիք»:

Ցանկացած մարդու համար իր հայրենիքը սկսվում է իր տնից, իր բակից, իր այգուց: Հայրենիքը սկսվում է իր երկրի մի թիզ հողից, մի կում ջրից, մի հանդամասից, մի կտոր երկնքից: Եվ ամենակարևորը՝ իր մայրենի լեզվից: Եթե այս ամենը մարդը չի հասկանում, ապա «հայրենիք» հասկացությունը նրա համար կդառնա մի ինչ-որ անորոշություն:

Թեմայի նպատակը: Դպրոցը, ուսուցիչները, ծնողները պարտավոր են ձևավորել երեխաների հայրենասիրական զգացմունքները: Պարտավոր են նրանց մեջ սերմանել հոգատար վերաբերմունք հայրենիքի պատմության, մշակույթի, հայրենիքում ապրող հարազատ ժողովրդի, ազգի ավանդույթների, սովորույթների նկատմամբ: Անկախ տարիքից, հասարակության բոլոր անդամների մեջ պետք է սեր դաստիարակել հարազատ վայրերի, իրենց գյուղի, ավանի, քաղաքի, հայրենի բնաշխարհի նկատմամբ:

Էպոսի դերը հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման գործում

Կրթության նպատակը անհատին ոչ միայն գիտելիքներով զինելն է, այլև նրա մեջ բարոյական որոշակի հատկանիշներ՝ արժեքներ ձևավորելը: Արժեքային կրթությունը ի սկզբանե կրթության անբակտելի բաղադրիչն է եղել: Ինչպես ամբողջ աշխարհում, Հայաստանում էլ այսօր արժեքային կրթությունը հասարակությանը հուզող խնդիրներից մեկն է: Մեզանում արժեքային կրթության նկատմամբ ավանդաբար ընդունված է հետևյալ մոտեցումը. դպրոցն ու ծնողները փորձում են բարոյական ժառանգությունը

փոխանցել նոր սերնդին՝ նրանց մեջ լավ արժեքներ սերմանելով և հաստատելով բարոյական այլևայլ հատկանիշների ճշմարտացիությունը:

Արժեքային կրթության նոր՝ արևմտյան մանկավարժության մեջ մշակված մոտեցման հիմքում մտածական հմտությունների ձևավորման սկզբունքն է: Ըստ սրա՝ աշակերտներին պետք է օգնել իմաստավորելու որոշակի արժեքներ, այսինքն՝ նրանց պետք է խրախուսել սեփական կենսափորձի և զանազան հարցադրումների միջոցով որոշել, թե իրենք ինչպիսի մարդ են ուզում դառնալ, ինչպիսի ավանդույթներ արժե պահպանել: Ուստի շատ կարևոր է առանձնահատուկ ուշադրություն դարձնել դասագրքերի նյութերին, ինչպես նաև ներկայացված հերոսների վարքագծի վերլուծությանը և դրա միջոցով որոշակի արժեքների բացահայտմանը: Սակայն վերլուծությունը ենթադրում է առաջին հերթին երեխաների գործուն մասնակցություն, այսինքն՝ աշակերտները պետք է հնարավորություն ունենան ազատորեն արտահայտելու իրենց կարծիքը, զգացմունքները, որոշակի հարցադրումներ անելու, ընկերների հետ քննարկելու, դատողություններ անելու հերոսների վարքագծի մասին, գնահատելու և իրենց համար բացահայտելու այս կամ այն արժեքը:

Հայրենասիրական արժեքների ձևավորումն ու զարգացումը մանավանդ համագործակցային ուսուցման դրույթների կիրառմամբ, խմբային աշխատանքներով տանում է աշակերտի սոցիալականացման: Սոցիալիզացիայի (անձնավորվելու) ողջ ընթացքն ի վերջո հանգում է նրան, որ անհատը անձ է դառնում՝ ձեռք բերելով հասարակական պատմական փորձը, այնուհետև իր վրա է վերցնում այդ փորձը մատաղ սերնդին փոխանցելու պարտականությունը: Սոցիալականացումը հասարակության մեջ և պրակտիկ գործունեությունում անձի սոցիալական վարքի յուրացման և ակտիվ վերարտադրման գործընթաց է և արդյունք: Այն անհատի հարաբերակցումն է սոցիումի հետ, ներգրավումը հասարակական կյանք, կոլեկտիվային վարքի ուսուցումը, ինքնահաստատումն և սոցիալական դերերի իրականացումը: Սոցիալականացում անվանվում է անձնայնացման գործընթացը, նրա ուսուցումը, դաստիարակումն ու տվյալ հասարակությանը հատուկ սոցիալական նորմերի, արժեքների, դրույթների, վարքային մոդելների յուրացումը:

Սոցիալականացումը լինելով դաստիարակության և ուսուցման հետ միևնույն բովանդակային հարթության վրա, ունի բոլորովին այլ պահանջներ. իր մեջ ներառում է ոչ մտադրված, ինքնաբուխ ազդեցություններ, որոնց շնորհիվ անհատը հարմարվում է մշակույթին և դառնում հասարակության լիիրավ և լիարժեք անդամ: Մարդու մոտ սոցիալական բնութագրիչների ձևավորումը սկսում է ծնված պահից և այլ մարդկանց հետ հարաբերությունների ստեղծումից: Սոցիոլոգիան մարդուն չի դիտարկում որպես կենսաբանական օրգանիզմ, այլ դիտում է որպես սոցիալական էակ: Առանձնացնում են անհատի

սոցիալականացման հետևյալ փուլերը՝ սոցիալական հարմարեցում (ադապտացիա) և ինտերիորիզացիա (սոցիալական նորմերի, օրենքների, կանոնների ընդունում):

Առաջին շրջանը վաղ սոցիալիզացիան է, որն ընդգրկում է մինչև երիտասարդության տարիքի վերջը, իսկ մյուս շրջանը՝ դրանից հետո ընկած շրջանները: Սոցիալական ադապտացիան իրենից ներկայացնում է անհատի հարմարեցումը սոցիալական միջավայրին, իսկ ինտերիորիզացիան գործընթաց է, որի ժամանակ մարդու ներաշխարհում սկսում են սերմանվել սոցիալական կանոնները, օրենքները, նորմերը:

Էպոս, գործածվում է երկու իմաստով

1. Լայն առումով գրական երեք սեռերից մեկը (էպիկական, ֆնարական, դրամատիկական),

2. նեղ ժանրային առումով ժողովրդական հերոսական կամ ավանդական վեպ, վիպական բանահյուսության ծավալուն և բարդ տեսակ, որը բաղադրվում է վիպական ու պատմահերոսական երկերից, ավանդություններից, զրույցներից:

Ազգային էպոսը էպիկական բովանդակությամբ էպիկական ժանրի բանաստեղծության կամ գրականության գործ է, որը ավանդաբար ներկայացնում կամ արտացոլում է որևէ ազգի մշակութային կամ ինքնաճանաչողական ոգին, դա կարող է վերաբերել նաև ինքնուրույնության կամ անկախության ձգտող որևէ էթնիկական կամ լեզվաբանական խմբի: Ազգային էպոսների մեջ հաճախ նկարագրվում է տվյալ ազգային էթնոսի ծագման և զարգացման պատմությունը. կամ պատմության մի մասը, կամ տվյալ ազգության ինքնորոշման կամ ինքնագիտակցման պատմության կարևորագույն դրվագները և այլ ազգային խորհրդանշանների ծագման կամ ընդունման պատմությունը:[1]

Էպիկական ժանրի զարգացումը գրականության մեջ ունի փուլային բնույթ և պայմանավորված է պատմական իրադարձությունների ընթացքով: Ազգային էպոսների ծնունդը սովորաբար ուղղորդվում է պանեգիրիկների կամ «հերոսապատումային մահախոսականների» և հերոսական աշխարհայացքին մոտ ողբերի զարգացումով: Այդ գրական ստեղծագործություններում անմահացված մեծ մարդկային գործքերը կամ ազգային ինքնագիտակցման խթան դարձած պատմական իրադարձությունները հաճախ դառնում են այն բովանդակությունը, որի շուրջը բանաստեղծները կառուցում են իրենց ստեղծագործությունները: Պանեգիրիկներն ու ողբերը սովորաբար շարադրվում են նույն ոճով և բանաստեղծական չափերով ինչ էպոսները և դառնում դրանց անբակտելի գեղարվեստական մասը:

Միջին դարերում համարվում էր, որ Հոմերոսի Իլիականը հիմնված է պատմական փաստացի իրադարձությունների վրա, և որ Տրոյական պատերազմը պետք է դիտվի որպես Եվրոպական միապետների ծագումնաբանության պատմական հիմնավորում: Վիրգիլիոսի Էնեականը դիտվում էր որպես Իլիականի

[1] 4.Հանրակրթական պետական կրթակարգ, չափորոշիչ ,,Անտարես,, Երևան, 2021

հոմեական համազոր տարբերակը, սկսած Տրոյայի անկումից մինչև երիտասարդ հոմեական ազգի ծնունդը: Եվ այն ժամանակներում գերիշխող պատմության հայեցակարգի համաձայն կայսրությունները ծնվում և մեռնում էին օրգանական հաջորդականությամբ և որոշակի համապատասխանություն կար անցյալի և ներկայի միջև: Եվ ճիշտ ինչպես արքաները ու միապետերն էին ուզում իրենց կենսագրություններով նմանվել Ալեքսանդր Մեծին կամ Հուլիոս Կեսարին, բանաստեղծները նույնպես զաղթակղվում էին նոր Հոմերոս կամ Վիրգիլիոս դառնալու պատվախնդիր ձգտումներով: 16-րդ դարում Լյուիս Վաս դե Կամոենսը փառաբանում էր Պորտուգալիան որպես ծովային տերություն իր Os Lusíadas պոեմում մինչ Պյեռ դե Ռոնսարդը նոր էր սկսում գրել La Franciade էպիկական ստեղծագործությունը, որը ըստ նրա մտահղացման պետք է դառնար Վիրգիլիոսի պոեմի գալլական տարբերակը, ըստ որի ֆրանսիական ժողովրդի նախնիները նույնպես ծագում էին Տրոյական իշխանների ցեղից:

«Սասնա ծռեր» կամ «Սասունցի Դավիթ», հայ ժողովրդի ազգային էպոսը կամ դյուցազնավեպը, որը ստեղծվել է ժողովրդական բանահյուսության հիման վրա: Վիպասացների և բանահավաքների կողմից այն կոչվել է նաև «Սասնա փահլևաններ», «Սասնա տուն», «Ջոջանց տուն», «Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ», «Դավիթ և Մհեր», «Դավթի պատմություն», «Դավթի հեքիաթ» և այլն: Էպոսի գաղափարական ոգին հայ ժողովրդի հերոսական մաքառումն է թշնամիների դեմ՝ հանուն ժողովրդի ազատության և անկախության, հայրենիքի և պետականության պահպանման: Հայոց դյուցազնավեպը գաղափարական առումով արտացոլում է նաև իրականությունից ունեցած դժգոհությունն ու կառուցվելիք արդար աշխարհի նկատմամբ ունեցած փափագը՝ բոլոր դեպքերում գովաբանելով օտարի լծի դեմ ելած ժողովրդի հերոսական պայքարը:

Էպոսը համահավաք տարբերակով կոչվում է «Սասնա ծռեր»: «Ծուռ» բառն այս պարագայում ունի իմաստային մի քանի նշանակություններ՝ դիվահար, խենթավուն, խելահեղ քաջ և այլն: Տվյալ հատկանիշներից յուրաքանչյուրն էպոսի հերոսների համար բնորոշ է այս կամ այն պարագայում: «Սասնա ծռեր» էպոսը կառուցվածքային առումով կազմված է վիպական չորս մասերից կամ ճյուղերից, որոնցից յուրաքանչյուրը կոչվել է տվյալ ճյուղի գլխավոր հերոսի անունով՝ «Սանասար և Բաղդասար», «Մեծ Մհեր», «Սասունցի Դավիթ», «Փոքր Մհեր»: Հերոսների այս չորս սերունդը միմյանց հետ կապված են ազգակցական կապերով: «Սասնա ծռերի» ամենաբնորոշ գիծը հերոսական անպարտելի ոգին է՝ պայմանավորված նրա նախահիմքում ընկած առասպելական դյուցազունների սխրանքներով և հայ ժողովրդի՝ իր ոսոխների, հատկապես արաբական բռնակալության դեմ մղած դարավոր պայքարով: Էպոսի ստեղծման հստակ թվականը մեզ հայտնի չէ, քանի որ վերջինս գալիս է ժամանակի խորքից և ունի պատմական խոր

ակունքներ: Էպոսի ասացողները էպոսը պատմել են հայկական տարբեր բարբառներով, մեծ մասամբ մոկաց, մշո, սասնա, ինչպես նաև արարատյան:[2]

Էպոսի պատումներից մեկը 1874թվականին գրի է առել Գարեգին Սրվանձտյանցը՝ հրատարակելով «Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» վերնագրով: 1889 թվականին էպոսի մի տարբերակ գրի է առել Մանուկ Աբեղյանը, իսկ արդեն 1939 թվականին Հովսեփ Օրբելին՝ էպոսագետների խմբի հետ մեկտեղ, ստեղծում է 60 պատումներից բաղկացած համահավաք բնագիր: Համահավաք բնագիրը թարգմանվել է ֆրանսերեն, չինարեն, անգլերեն (թարգմանիչ՝ Լևոն Զավեն Սյուրմելյան), հունարեն, ռուսերեն, գերմաներեն, վրացերեն, թուրքերեն, ադրբեջաներեն և այլ լեզուներով: «Սասնա ծռերն» ամբողջական կամ մասնակի մշակել են նաև Ավետիք Իսահակյանը, Եղիշե Չարենցը, Սողոմոն Տարոնցին, Վիգեն Խեչումյանը, Հմայակ Սիրասը, Մկրտիչ Խերանյանը, Նաիրի Զարյանը և ուրիշներ: Էպոսին բազմիցս անդրադարձել են կերպարվեստում (Հակոբ Կոջոյան, Երվանդ Քոչար, Մհեր Աբեղյան, Էդուարդ Իսաբեկյան, Արտաշես Հովսեփյան և ուրիշներ), երաժշտության մեջ (Գևորգ Բուդաղյանի «Խանդուբ» երաժշտական կոմպոզիցիան՝ ըստ Ալեքսանդր Սպենդիարյանի երաժշտության, Էդգար Հովհաննիսյանի «Սասունցի Դավիթ» բալետ-օպերան և այլն), կինոարվեստում («Սասնա ծռեր», ռեժիսոր՝ Արման Մանարյան, 2010 թվական, մուլտֆիլմ), թատրոնում: Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին սփյուռքահայերի հանգանականությամբ ստեղծվել է «Սասունցի Դավիթ» տանկային շարասյունը, իսկ Արցախյան պատերազմի տարիներին կազմավորվել են «Սասնա ծռեր» և «Սասունցի Դավիթ» կամավորական ջոկատները: Հայաստանի անկախ Հանրապետությունում էպոսի հերոսների անուններով կոչվել են տեղանուններ, ինչպես նաև «Սասունցի Դավիթ» անունով մետրոպոլիտենի կայարան:

Հայոց դյուցազնավեպը սկսվում է Բագրատունիների թագավորության արբա Գագիկի դստեր՝ Ծովինարի և Բաղդադի անհավատ խալիֆի ամուսնությամբ: Ծովինարի գեղեցկության մասին խալիֆը տեղեկացել էր իր հարկահաններից, ովքեր Հայաստան էին ժամանել տուրքերը ստանալու: Նկատելով չնաշխարհիկ արքայադստերը՝ հարկահավաքները միանգամից խալիֆին տեղեկացնում են Ծովինարի գեղեցկության մասին: Խալիֆը Ծովինարին մեկ անգամ տեսնելուց հետո իր ստորադասներին հրամայում է ամեն գնով Բաղդադ տանել գեղեցկուհուն: Շուտով հայոց աշխարհ են ժամանում վերջինիս պատվիրակները, ովքեր սպառնում են Ծովինարին՝ խալիֆին կնության չտալու դեպքում պատերազմ մղել:

Այս հարցի շուրջ հայոց ավագանու անդամներն ունեին հակասական դիրքորոշում. անդամների մի մասը կտրականապես դեմ էր մուսուլման խալիֆի և խաչապաշտ արքայադստեր ամուսնությանը, իսկ մյուս մասը՝

[2] 1.Մ.Գիլավյան, Ժամանակակից հայ մանկագիր բանաստեղծներ, Ե., 2005:
2.Լ. Ներսիսյան, Նորագույն շրջանի մանկապատանեկան արձակը, Ե., 2004

ընդհակառակը, պնդում էր, որ արյունահեղությունից խուսափելու համար հարկավոր են Ծովինարին տալ խալիֆին կնության: Գիտակցելով իրավիճակի լրջությունը և ցանկանալով զերծ մնալ հազարավոր ահերից՝ Ծովինարն ինքնակամ որոշում է կայացնում ամուսնանալ և հորը խնդրում իրեն կնության տալ Բաղդադի խալիֆին: Գագիկը ևս հակված չէր այս տարբերակին, բայց ստիպված էր հարգել դստեր կամահայտնությունն ու հայկական պետականության շահերը:

Հասնելով Բաղդադ՝ Ծովինարը պայման է դնում խալիֆի առաջ, որ նա առաջիկա մի տարին չպետք է մոտենա իրեն: Արաբաց խալիֆը համաձայնվում է այդ պայմանի հետ և արքայադստեր համար առանձին դղյակ կառուցում: Ըստ հին հայկական ավանդական սովորության՝ Հարսանեկան տոնի ժամանակ հայ կանայք դուրս էին գալիս դաշտ և բախտագուշակ կատակերգերով վիճակ հանում: Ծովինարն այդ օրը դուրս էր եկել զբոսանքի և երկարատև շրջածությունից հետո որոշում է դույզն-ինչ դադար առնել: Ծարավի զգացումը խեղդում էր գեղեցկուհի նորահարսին և դեպի երկինք ուղղված նրա աղերսով ժայռի միջից վճիտ աղյուր է բխում: Սառնորակ աղբյուրի ջուրն ուներ մոգական կարողություն, որի շնորհիվ էլ Ծովինարը հղիանում է իր խմած ջրից: Լսելով կնոջ հղիության լուրը՝ Բաղդադի խալիֆը հրամայում է մահապատժի ենթարկել նրան, սակայն Ծովինարը խնդրում է ժամանակ տալ իրեն, որպեսզի վախճանվի երեխաներին ունենալուց հետո: Այսպիսով, հայոց Գագիկ թագավորի դուստրը ծնում է երկու դյուցազուն, որոնցից մեկի անունը կնքվում է Բաղդասար, մյուսինը՝ Սանասար: Նրանք հասակակիցներից տարբերվում էին իրենց օրեցօր աճի կարողությամբ և զորեղությամբ:

Սանասարն ու Բաղդասարը՝ Ծովինարի որդիները, ոչ թե օրով, այլ ժամով էին մեծանում և տակավին հինգ տարեկան չդարձած՝ ահ ու սարսափի մեջ են գցում Բաղդադի ավազանու երեխաներին: Այս հողի վրա վեզիրների և խալիֆի միջև վիճաբանություն է տեղի ունենում, որի արդյունքում որոշվում է տղաներին հեռացնել Բաղդադից: Գագիկ արքայի թոռների հետագա մանկությունն անցնում է հայոց երկրում, քանի որ Բաղդադից նրանց հեռացնելուց հետո վերջիններս հանգրվանել էին իրենց պապի մոտ: Կարճ ժամանակահատվածում Բաղդասարն ու Սանասարը մեծանում են՝ վերածվելով աննկարագրելի ուժի տեր դյուցազունների: Շուտով նրանք ուղևորվում են այն ավազանի մոտ, որտեղից կյանք են ստացել: Սանասարը կրտսեր եղբորն առաջարկում է նետվել ծովի ալիքների մեջ, սակայն Բաղդասարը հրաժարվում է: Սանասարը համարձակորեն ձգտվում է ծովի ալիքներին ընդառաջ, սակայն ջրերը հետ են քաշվում, իսկ քաջարի դյուցազունն ընկնում է ստորեկրյա թագավորություն:

Այստեղ հրաշք է կատարվում. կյանքի աղբյուր համարվող Մարութա Բարձրիկ Սուրբ Աստվածածինը Սանասարին է հանձնում Թուր Կեծակին (կայծակնային սուր) և Քուռկիկ Ջալալին: Առասպելական այդ ձին ուներ աննկարագրելի արտասովոր հատկություններ, քանզի մարդկային լեզվով խոսելուց բացի նա նաև

կարողանում էր անձայրածիր ճանապահներ անցնել և թռչել մինչև առ արեգակ: Կենատու ջրերում Սանասարը ձեռք է բերում նաև անխոցելի զենք ու զրահ, իսկ բազուկի վրա դրոշմվում է յուրօրինակ մի խաչ: Ծովի ջուրը Սանասարին դարձնում է իրական մի հսկա, որ անգամ եղբայրը նրան չի ճանաչում և վերջինիս տեսնելով ահարկու փախչում է: Շուտով նա իմանում է եղելությունը, որից հետո միայն քաջազունները շարունակում են իրենց ճանապարհը: Շուտով եղբայրներն ականատես են լինում, թե ինչպես է լեռներից հոսող մի ուժգին առու կտրում-անցնում մի մեծ գետի ամբողջ հոսանքը: Գայթակղված այդ ջրի զորությունից՝ Սանասարն ու Բաղդասարը գտնում են առվի հոսքի սկզբնակետը և վերջինիս ակունքների վրա վիթխարի ապառաժներից ամրոց կառուցում: Շուտով Սանասարն ու Բաղդասարը ձեռնամուխ են լինում իրենց հիմնադրած ամրոցի հարակից տարածքների բնակեցմանը և այդ նպատակով հայոց աշխարհից 40 ընտանիք բերելով հաստատում են այստեղ: Այսպիսով, առասպելական տեսանկյունից՝ սա է Սասուն քաղաքի հիմնադրման պատմությունը: Շինարարական աշխատանքների ավարտից հետո եղբայրները ցանկանում են անվանում տալ իրենց հիմնադրած բնակավայրին: Հենց այս ժամանակ էլ նրանց պատահաբար հանդիպում են ծերունի մի սերմնացանի, որից էլ խնդրում են անուն մտածել բարձրաբերձ և վահաուք քաղաք-ամրոցի համար:

Սասունի հիմնադրումից հետո քաջազունները մեկնում են Պղնձե քաղաք, որտեղ Սանասարն ամուսնանում է այդ քաղաքի արքայի դստեր՝ Քառասուն-Ճուղ-Ծամ Դեղձուն-Ծամի կամ պարզապես Դեղձունի հետ: Վերջինս Սանասարին տեսել էր իր երազում և վերջինիս այդ մասին տեղեկացրել էր նամակի միջոցով: Բաղդասարն էլ իր հերթին ամուսնանում է Դեղձուն-Ծամի քրոջ հետ և մեկնում Բաղդադ: Սանասարն ու Դեղձունն ունենում են երեք որդի՝ Մհերը, Օհանը և Ցոռան Վերգոն: Էպոսի վիպական երկրորդ ճյուղում Սանասարի և Բաղդասարի գործը շարունակում է եղբայրներից ավագի որդին՝ Մհերը:

Ուստի 21-րդ դարի դպրոցում դաստիարակության և կրթական գործընթացի ճիշտ կազմակերպման համար շատ կարևոր են ոչ միայն համամարդկային, այլև հայրենի մշակույթի բարձրարժեք ստեղծագործությունների ուսումնասիրումն ու ուսուցումը: Այդ ստեղծագործություններում արտահայտված են մեր ժողովրդի հոգեկերտվածքը, աշխարհընկալումը, մարդասիրական գաղափարներն ու գալիքի երազանքները: Հայ ժողովրդի ավանդույթներում է, որ վառ կերպով արտացոլված են մեր ազգի ազգային հավաքական բնույթը, անդրդվելի կամքը, ներքին զորությունն ու հնարավորությունները, ապրելու, վերածնվելու և հարատևելու ունակությունը, ազգերի պատմության մեջ իր արժանի տեղն ունենալու ձգտումը: Այս ամենն է, որ անհրաժեշտ է ավանդել ժամանակակից էքսոկրին: Այդպես նա պիտի հասնի այն գիտակցության, որ հասարակական կյանքի առաջընթացը պայմանավորված է համախմբվածությամբ, գիտելիքների բարձր մակարդակով ու մշակութային արժեքների ոչ միայն ստեղծմամբ, այլև պահպանմամբ:

Սերունդ, որը կկարողանա շարունակել ազգային լավագույն ավանդույթները, աշխարհին ու մարդկությանը ցույց տալ իր մշակութային հարստությունն ու բարոյահոգեբանական արժանիքները:

Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական, խմբային,էքսկուրսիա,դասղեկական ժամ, արտադասարանական միջոցառումներ և այլն)առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիրակչական խնդիրների լուծումը: Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները, միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ, ընդօրինակել միմյանց և այլն:

Յուրաքանչյուր ուսուցիչ ձգտում է անբերի դաս անցկացնել, սակայն միշտ չէ, որ դա հաջողվում է:Որակյալ դաս անցկացնելը այդքան էլ հեշտ չէ,նույնիսկ փորձառու ուսուցչի համար:

Դա կախված է մի շարք գործոններից,

1. սոցիալական պատվերով պայմանավորված՝ դասերին ներկայացվող պահանջների գիտակցումից և կատարումից,

2. նպատակներից,ինչպես նաև ուսումնադաստիրակչական և զարգացնող խնդիրների լուծումից,

3. ուսումնական գործընթացի օրինաչափություններից և սկզբունքներից,

4. դեպի ազգային արժեքներ ուսուցման կողմնորոշումից,

5. սովորողներին ազգային և համաշխարհային մշակույթի, մարդկության հոգևոր փորձին ծանոթացնելու ՝ պատմության դասերի ուղղվածությունից,

6. դասերի ժամանակ համաշխարհային և ազգային պատմության համամասնության պահպանումից,

7. պատմական փաստերի բազմակողմանի գնահատումից,միևնույն իրադարձության կամ երևույթի վերաբերյալ գոյություն ունեցող տեսակետների ծանոթանալուց և այնպիսի պայմանների ստեղծումից, որ սովորողների մոտ ձևավորվի սեփական հիմնավորված կարծիք,

8. սովորողների մոտ տեղեկատվություն աղբյուրների նկատմամբ քննադատական վերաբերմունքի ձևավորումից, դրանց հետ ինքնուրույն աշխատելու և հետևություններ անելու կարողությունների մշակումից,

9. ստեղծագործական,զգացմունքային մթնոլորտի ձևավորումից,որը հենված է դասի բովանդակության և ուսումնական աշխատանքի նկատմամբ սովորողների հետաքրքրությունների վրա:

Դասին ներկայացվող կարևորագույն պահանջ և յուրաքանչյուր դասի բնորոշ հատկանիշ է ուսումնական նպատակի հստակությունը,դաստիրակող և զարգացնող խնդիրների անխզելի կապը և այդ խնդիրների հստակ ու հետևողական իրագործումը: Ուսումնական ծրագրի բովանդակությունը , դասի ուսումնական

դաստիրակչական և զարգացնող խնդիրները, աշակերտների տարիքը, նրանց գիտելիքների մակարդակը խնդիրները, աշակերտների տարիքը, նրանց գիտելիաների մակարդակը, հմտություններն ու կարողությունները համատեղ պայմանավորում են նյութի ընտրությունը, դրանում գլխավորի առանձնացումը, ինչպես նաև դասի ժամանակ ուսուցչի օգտագործած մեթոդներն ու հնարները:

Հասակակիցների խմբում աշակերտն ավելի ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողություններ, գործում է անկաշկանդ, ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը: Անհատական աշխատանքում դաստիրակվում է աշակերտների ինտելեկտուալ պատրաստակամությունը դժվարությունները հաղթահարելու գործում ձևավորում են համառություն, ինքնակազմակերպման և ինքնավերահսկման ընդունակություններ: «Հատկապես դեռահասների առանձնահատուկ զգացմունքայնությունը, ինքնասիրությունը, որ հաճախ արտահայտում է նրանց ինքնահաստատման և հասուն երևալու ձգտումը, մանկավարժից պահանջում է անհրաժեշտ նրբանկատություն,հարգանք դեռահասի անձի նկատմամբ»: Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք եզրահանգել ,որ արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում:[3]

Եզրակացություն

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեհամակարգի մեջ

[3] 1.Մ.Գիլավյան, Ժամանակակից հայ մանկագիր բանաստեղծներ, Ե., 2005:
2.Լ. Ներսիսյան, Նորագույն շրջանի մանկապատանեկան արձակը, Ե., 2004
3.Ղույումչյան Գ. Ե. Գիրք 1, Մանկավարժություն,Երևան,2005թ. 463 էջ.:
4.Հանրակրթական պետական կրթակարգ, չափորոշիչ ,,Անտարես,, Երևան, 2021

կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների:Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակույթային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Արժեքների բուրգի գագաթին գտնվող նվիրական ու մեծագույն արժեքը՝ հայրենասիրությունն է,որը լավագույն կերպով մատուցվում է հայոց պատմության դասընթացների ժամանակ: Այն մեծագույն արժեքն է, որ հարգանք ու պատկառանք է հարուցում, նույնիսկ երբ դրսևորվում է հակառակորդի կամ թշնամու մոտ: Ի դեպ, յուրաքանչյուր ուսուցիչ ունի որոշակի հեղինակ կամ ստեղծագործություն, որը նրան ամենադյուրին կերպով է օգնում իր մանկավարժական խնդիրները լուծելու, տվյալ դեպքում՝ հայրենասիրության բարձրագույն արժեքը սաների հոգիներում սերմանելու համար:

Նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում լուրջ անելիքներ ունի բնավ հայ դպրոցը, որի գերնպատակն է կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Մ.Գիլավյան, Ժամանակակից հայ մանկագիր բանաստեղծներ, Ե., 2005:
2. Լ. Ներսիսյան, Նորագույն շրջանի մանկապատանեկան արձակը, Ե., 2004
3. Ղույումչյան Գ. Ե. Գիրք 1, Մանկավարժություն,Երևան,2005թ. 463 էջ.:
4. Հանրակրթական պետական կրթակարգ, չափորոշիչ ,,Անտարես,, Երևան, 2021